15,04,2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արևիկ Անապիոսյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ Կրթության և Գիտության Նախարարի Տեղակալ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Բելգիա, Բրյուսել 2019թ Ապրիլ 9

4. Հրավիրող Կողմը

Եվրամիության Արևելյան Գործընկերություն

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Արևելյան Գործընկերության Պլատֆորմ 4

6. Քննարկված Թեմաները

- Արևելյան Գործընկերության հիմնական ձեռքբերումները

- Ժողովրդագրական և տեխնիկական փոփոխությունների ստեղծած հնարավորություններն ու մարտահրավերները
- Խելացի մասնագիտական զարգացման և տեխնիկայի փոխադրությունը
- Սովորել և սովորեցնել թվային դարաշրջանում
- Կրթություն ուղղված կայուն զարգացմանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

- Հանդիպման ժամանակ տեղի ունեցած ոլորտային քննարկումների ձևաչափի համաձայն, ելույթի միջոցով քննարկվել են ԵՄ հանուն նորարարության ծրագրի կարևորությունը միջին մասնագիտական կրթության ոլորտում, դրա արդյունքում փորձի փոխանակման հնարավորությունները, ինչպես նաև կրթության և հետազոտության փոխկապակցվածության և փոխազդեցության կապը: Կարևորվել է նաև բարձրագույն կրթության ոլորտում Էրասմուս + ի դերը, ինչպես նաև Հայաստանում դուալ կրթության և տնտեսական զարգացման փոխկապակցվածությունը:

Հանդիպման ժամանակ վերոհիշյալ թեմայով տեղի ունեցած ելույթից զատ տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները:

- Աշխատանքային ճաշ Լ. Դեվինի (Ռուսաստանի, Արևելյան Գործընկերության, Կենտրոնական Ասիայի, Տարածքային Համագործակցության և ԵԱՀԿ-ի, Եվրոպական Արտաքին Գործերի ծառայության ղեկավարի տեղակալ), Լ. Մերեդիթի և Վ.Մարագոսի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել է կրթության երկխոսության թեման, ինչպես նաև ստեղծարար ոլորտի զարգացման կրթության դերը դրանում:
- Հանդիպում ԵՄ Հորիզոն 2020 շրջանակներում Արևելյան Գործընկերության պետությունների համակարգող Ստեփան Սադլերի հետ: Հանդիպման ընթացքում

քննարկվել են քաղաքական աջակցության շրջանակներում Հայաստանին տրամադրվող փորձագիտական խորհրդատվության մանրամասները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Վ.Մարագոսի հետ հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ դիտարկելու իրենց հաջորդ այցի ժամանակ հայկական կողմին ներկայացնելու խելացի մասնագիտական զարգացման ռազմավարության մշակման գործիքների հնարավորությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ելույթի ժամանակ առաջարկվել է երիտասարդների նորարարական մտքերի համար պլատֆորմի ստեղծում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X_____